«ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ կողմից փորձաքննության ներկայացված «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության և դրա փորձաքննական գործընթացի վերաբերյալ հանրային լսման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

04.09.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշման հավելվածի /այսուհետ՝ Հավելված/ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք ՀՀ Սյունիքի մարզի Կապանի մշակույթի կենտրոնում /ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան, Չարենց 1 շենք/ 2024 թվականի օգոստոսի 30-ին, ժամը 15:00-ին տեղի ունեցավ «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ կողմից փորձաքննության ներկայացված «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության և դրա փորձաքննական գործընթացի վերաբերյալ հանրային լսում:

Քննարկմանը ներկա էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյանը, «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ աշխատակիցներ՝ Գառնիկ Հարությունյանը, Մարինե Ոսկանյանը, «Հայանտառ» ՊՈԱԿ «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի աշխատակիցներ՝ Սասուն Մանուկյանը, Դավիթ Համբարձումյանը, Արտուշ Հովհաննիսյանը, էկոպարեկային ծառայության ներկայացուցիչ՝ Էդուարդ Կարապետյանը, Կապանի և Քաջարանի համայնքապետարանների աշխատակիցներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի օգոստոսի 15-ի թիվ 34 (1400) համարում, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կապանի և Քաջարանի համայնքապետարանների պաշտոնական կայքերի (www.env.am, www.kapan.am,www.kajaran.am) հայտարարությունների բաժնում:

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Արմինե Վարդանյանին:

Զեկույց (Արմինե Վարդանյան) – Շնորհակալ եմ, ողջունում եմ բոլորիդ, Արմինե Վարդանյանն եմ շրջակա միջավայրի նախարարության փորձաքննական կենտրոնի գլխավոր մասնագետ: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ընկերության կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքնության է ներկայացվել «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033 թթ. կառավարման պլանը: Այսօր այդ առաջին հանրային քննարկումներ են, որոնք իրականացվում են օրենքի շրջանակներում: Օգոստոսի 9-ին նշանակված էր հանրային քննարկում այս փաստաթղթի վերաբերյալ, սակայն առարկություններ եղան Կապանի համայնքապետարանի կողմից և որոշվեց քննարկումները հետաձգել և նշանակել ամսի 30-ին՝ այսօր: Հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է նախարարության տարբեր ստորաբաժանումներ, տարբեր գերատեսչություններ՝ կարծիքներ ստանալու համար: Փորձաքննության փուլում եղել են դիտողություններ մեր կողմից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների կողմից, կադաստրի կոմիտեից, որոնք խմբավորել, ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման: Լրամշակված հաշվետվությունը ներկայացվել է, սակայն որոշ թերություններ կան, որոնք չեն շտկվել: Փորձաքննության ընթացքում պարզվել է, որ Կապանի անտառտնտեսության մասնաճյուղի կառավարման պլանի որոշ հատվածներ համընկնում են Խուստուփի և Զանգեզուրի արգելավայրերի հետ, որոնց սահմանները հաստատված են 2013 թվականի դեկտեմբերի 19-ի 1465-Ն կառավարության որոշմամբ, այսինքն՝ հատուկ պահպանվող տարածքները ներառվել են անտառկառավարման պլանի տարածքներում: Նաև ունենք Կապանի համայնքապետարանի կողմից բավականին դիտողություններ՝ կապված քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողերի ներառումը կառավարման պլանում Այս մասին լրամշակման են ուղարկվել և պետք է շտկումներ լինեին, բայց ուղղումներ չեն կատարվել, ինչպես նաև առաջարկվել էր հաշվետվությունում ներառել Կարմիր գրքում առկա կենդանիների և բուսատեսակների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը ևս չի իրականացվել: Ես կխնդրեի որպեսզի այս մասին Ձեր առաջարկները ներկայացնեք և ինչպես նաև Կապանի համայնքապետարանը ևս ներկայացնի իր դիտողությունները այս փաստաթղթի վերաբերյալ: Հետո ընթացքում ես հարցերս նորից կուղղեմ Ձեզ:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շնորհակալություն տիկին Վարդանյան, թույլ տանք «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» սահմանափակ պատասխանատվության ենթակապալառու ընկերության ՇՄԱԳ փորձագետը ներկայացնի իր զեկույցը, որից հետո կանցնենք հարցերին: Խոսքը փոխանցում եմ Մարինե Ոսկանյանին:

Զեկույց (Մարինե Ոսկանյան) – Ես Մարինե Ոսկանյանն եմ: Ներկայացնում եմ ECE Copucasus ընկերությունը և հանդիսանում եմ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձագետ: Նշեմ, որ կառավարման պլանը մշակվել է համատեղ՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ միասին և բազմիցս՝ այսինքն 2 անգամ, ըստ օրենքի տեխնիկական լսումներ են արվել և համաձայնեցվել են բնակիչների հետ: Այնպես չի փաստաթուղթը կազմվեց և ներկայացվեց ու տրվեց Ձեզ:

Հարց (Գոռ Թադևոսյան) – Ներողություն, ի՞նչ է արվել: Երկու անգամ ի՞նչ է արվել:

Պատասխան (Մարինե Ոսկանյան) – Հանրային լսում չէ՝, հանրության հետ հանդիպումներ են իրականացվել, 2023 թվականին է իրականացվել և այսինքն ինչ է ստացվում, որ մեր մասնագետները որքան էլ իրենք ունեն մի քանի տարվա փորձ, այսինքն տասնյակ տարիների փորձ և առաջին անգամ չէ, որ որակյալ աշխատանք են ցուցաբերել և ամեն դեպքում նրանք հանդիպել են բնակիչների հետ ու փորձել են իմանալ հենց գործնականում ի՞նչ խնդիրներ են առկա, ինչ խնդիրներ կան: Փորձել են այդ բոլոր խնդիրները ինտեգրել կառավարման պլանի մեջ՝ Կապանի անտառտնտեսության կառավարման պլանի մեջ: Այսինքն՝ անտառտնտեսությունն ինքն իրեն ունի նաև առանձին անկախ պետություններ և անկախ պետության վերաբերյալ նաև առանձին վերլուծություններ են արվել: Կազմվել են քարտեզներ, նշեմ, որ Forest Book ծրագրի միջոցով Excel ֆայլում հավաքվել են բազմաթիվ տվյալներ և հսկայական աշխատանք է արվել և այդ Excel ֆայլերով էլ հնարավոր է այդ ֆայլերը ներբեռնել ArcGIS համակարգ և այդ տվյալներով նաև քարտեզներ կազմել: Եթե նայել եք, վստահ եմ, որ նայել եք՝ կտեսնեք, թե ինչպիսի քարտեզներ են կազմված: Նշեմ, որ այս քարտեզները հնարավորություն են տալիս այն մարդուն, ով այնքան էլ անտառներից տեղեկատվություն չունի ինքը կարող է օգտվել, տեղադրել, ավելացնել տվյալներ և տեսնել, թե որ տարածքը որտեղ է գտնվում, պահպանվող տարածք է, անտառտնտեսության մեջ է մտնում, թե չէ: Եվ նշեմ հիմա հենց քարտեզում էլ մենք տեսնում ենք Կապանի անտառտնտեսության տեղադիրքը և իրականում, եթե հետաքրքիր է նաև ֆայլերը կարող ենք փոխանցել, որպեսզի Ձեզ համար էլ հետաքրքիր վերլուծական աշխատանք լինի: Համայնքապետարանում էլ պետք լինի այդ վերլուծական աշխատանքները, որ կարողանաք իրականացնել և նշեմ, որ անտառշինական աշխատանքները արվում են 1938 թվականից սկսած և 10 տարին մեկ արվել են այդ աշխատանքները: Այստեղ վերջին անգամ արվել է 2007 թվականին և տեսնում ենք ահագին մեծ բացթողում: Ու հիմա այս կառավարման պլանի միջոցով փորձում ենք հիմք դնել, որպեսզի ավելի բարելավենք շարունակական արվող աշխատանքը: Այսինքն ինչքան էլ արվել է, միշտ որոշակի բաց է մնացել և հիմա էլ փորձում ենք նոր տեխնոլոգիաներ կիրառելով ավելի բարելավենք տարածքը: Նշենք նաև, որ արբանյակային նկարներ են արվել և

այդ արբանյակային նկարների միջոցով էլ մասնագետները նկատել են այնպիսի տարածքներ, որոնք բանուկ չեն և որոշվել է, որ այդ տարածքներում պետք է ծառատունկ իրականացվի: Նաև ՌԷԳ պլանով՝ Ռազմավարական էկոլոգիական գնահատման պլանով նախատեսվում է, որպեսզի մոնիթորինգ իրականացվի: Պետք է մենք կայունություն ցույց տանք և անընդհատ մոնիթորինգի արդյունքում բացահայտենք: Բայց մի բան էլ երբեմն, որ ասում ենք մոնիթորինգ թվում է, որ այդ մոնիթորինգներով մենք, որ բացահայտում ենք դա արդեն պատասխանատվության կրում է և գտնում ենք, որ այդ լուծումներն էլ պետք է մոնիթորինգը անողը տա: Սակայն այդպես չէ, մոնիթորինգային տվյալները պետք է ներկայացվեն տեսչական մարմին և տեսչական մարմինը նախարարության հետ միասին պետք է իրականացնի համապատասխան աշխատանքներ: Նաև ամբողջ աշխարհում, սա միայն Հայաստանում չէ, նաև զարգացած երկրներում անընդհատ մենք նորություններով լսում ենք որ հրդեհի ինչ որ դեպքեր են եղել: Այս դեպքում որպես զարգացող երկիր լինելով մենք նույնպես այս խնդրին մեծ ողջություն ենք տվել և ուշադրություն ենք դարձրել ու որոշակի տեխնոլոգիաներ ներդնելու միջոցով նաև փորձել ենք նվազեցնել հրդեհների ռիսկը այս տարածքում: Շնորհակալություն, եթե ունեք ավելացում խնդրեմ:

Մեջբերում (Արմինե Վարդանյան) – Ես մի բան ունեմ ավելացնելու, ասեմ որ ՌԷԳ-ը կազմված էր «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան: Մինչև մոնիթորինգի ծրագիրը՝ ինչ որ սահմանված է ՌԷԳ-ը պարունակում է, սակայն այստեղ կա ուրիշ խնդիր՝ ՌԷԳ-ը որպես փաստաթուղթ ամբողջական է: Մենք այստեղ ունենք խնդիր հատուկ պահպանվող տարածքների ներառվածությունը կառավարման պլանում և ինչպես նշեցի համայնքի ժողովրդի հետ կապված:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Խնդրեմ պարոն Մանուկյան:

Խոսք (Սասուն Մանուկյան) – Սասուն Մանուկյան «Կապան անտառտնտեսություն» մասնաճյուղի ղեկավար: Դուք մատնանշեցիք 2013 թվականի որոշումը:

Պատասխան (Արմինե Վարդանյան) – Այո:

Խոսք (Սասուն Մանուկյան) – Այստեղ ժամկետ է սահմանվել, որ 1 տարվա ընթացքում այդ կատեգորիան պետք է փոխվի: Կառավարության որոշումը կյանքի չի կոչվել: Կապանի անտառտնտեսությունն այդ տարածքը չի տվել պահպանվող տարածքներին: Իսկ գործընկեր կազմակերպությունը, որը պետք է անտառշինական, անտառկառավարման քարտեզագրում կատարի ուղղորդվել է բացառապես ՀՀ լիազոր մարմնի՝ կադաստրի կոմիտեի ներկայացրած քարտեզի վրա: Որտեղ անտառային պետական հողերը, որոնք պահպանվող չեն՝ ներառված են մասնաճյուղի տարածքում: Ավելին ասեմ, եթե անգամ այս որոշումում փոփոխություն է կատարվել

պետք է տրվեր կառավարության նոր որոշում, որովհետև ժամկետը լրացել է: Ժամկետանց կառավարության որոշումով ոչ մեկ կարգավիճակ չի փոխում:

Խոսք (Արմինե Վարդանյան) – Այստեղ կետեր կան, որի մասին ժամկետ չկա:

Լրացում (Սասուն Մանուկյան) – Գրված է պահպանվող տարածքի կարգավիճակ տալ մեկ տարվա ընթացքում:

Հարց (Գառնիկ Հարությունյան) – 2013 թվականից քանի՞ տարի է անցել:

Խոսք (Սասուն Մանուկյան) – Մի կողմ թողնենք, թե ով չի արել, եթե պիտի կառավարության անգամ այս որոշումը կատարվի պետք է տրվի կառավարության նոր որոշում: Ընդամենը, երեկ կառավարության նիստում Լիդիան Արմենիա ընկերության բաժնեմասը ընդունելու համար կառավարությունը երրորդ անգամ որոշում կայացրեց՝ հետաձգել ժամկետը: Այսինքն այդ ժամկետները, որ լրանում են կամ պետք է ի կատար ածվեն, կամ երկարաձգվեն: Հիմա ժամկետանց որոշումով նախ կադաստրը այս օրենքով կարգավիճակը չի փոխի պահպանվողի, որովհետև դա օրենքի խախտում է: Չկա այդ որոշումը, չի կիրառվում: Հայանտառը իր տարածքը չի հանձնել, իսկ աշխատանք իրականացնողը առաջնորդվել է լիազոր միակ մարմնի ներկայացրած քարտեզի հիման վրա: Այլ բան չէր կարող արվեր: Ինչ վերաբերում է համայնքին՝ մենք համայնքի գործընկերների հետ կաշխատենք, որովհետև սա համայնքի բնակիչներին է վերաբերվում և նրանք ովքեր սեփականության վկայական ունեն, մենք կադաստրի հետ կաշխատենք: Կարծում եմ աշխատանքային գործընթացը համայնքի հետ այդ հարցը կլուծենք, բայց ինչ վերաբերում է կոնկրետ Խուստուփ արգելավայրին, որոշման մեջ, այդտեղ էլ խնդիր կա, արգելավայր հիմնելու համար մոտ 6200 հա Կապանի անտառտնտեսությունից տրամադրվելու: Եթե նկատի ունենանք նաև այն հանգամանքը, որ կառուցվածքային էական փոփոխություն է տեղի ունեցել, իսկ տեղի է ունեցել, որովհետև դուք տեղյակ եք, որ հունվարի 1-ից թե՛ անտառտնտեսության տարածքը և թե՛ պահպանվող տարածքը Զանգեզուր կենսոլորտային համալիրի պահպանությունն իրականացնում է էկոպարեկային ծառայությունը:

Խոսք (Գոռ Թադևոսյան) - Շատ լավ: Հարգելի գործընկերներ խոսքը փոխանցենք Կապան համայնքի ղեկավարի տեղակալ Մարատ Հարությունյանին: Խնդրեմ պարոն Հարությունյան:

Խոսք (Մարատ Հարությունյան) – Մարատ Հարությունյան՝ Կապան համայնքի ղեկավարի տեղակալ: Հարգելի գործընկերներ, հարցս ցանկանում եմ ուղղել «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ընկերության ներկայացուցիչներին: Խոսքս վերաբերում է ռազմավարական էկոլոգիական

գնահատման հաշվետվության մեջ ներառված որոշակի նախադասություններին և դրանց հետագա գնահատմանը: Մասնավորապես կա նշված, որ հարակից համայնքների հետ անտառշինական և համայնքների կադաստրային քարտեզներում առկա անտառային հողատեսքերի անհամապատասխանությունների ճշտման աշխատանքներ են կատարվել: Նախ կցանկանայի իմանալ ե՞րբ են կատարվել այդ ճշտման աշխատանքները և գույքագրման ու անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի կադաստրային քարտեզագրման նյութերի համադրություն և ի հայտ է բերվել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ: Դրանք ճշտվել և քարտեզները համաձայնեցվել են համայնքների և անտառտնտեսության հետ: Խնդրում եմ տալ պարզաբանում դրանց վերաբերյալ:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) - «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ փոխտնօրեն: Ուրեմն կան կադաստրային շեղումներ ընդհանուր քարտեզներում: Այդ ամբողջ շեղումները մեր քարտեզագրողները իրենց նկարներով իրենց տվյալներով ամբողջը օգտագործել են: Դա եղել է 2023 թվականին: Սահմանները նկատի ունեմ:

Խոսք (Մարատ Հարությունյան) – Ես չեմ բացառում, որ կան կադաստրային շեղումներ, որովհետև մեր մոտ էլ մեր համայնքային քարտեզներում էլ կան այդ շեղումները:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) – Ես դրա մասին եմ ասում:

Խոսք (Մարատ Հարությունյան) - Սակայն հարցը վերաբերում է նրան, որ այս դրույթները համաձայնեցվե՞լ են համայնքների և անտառտնտեսության հետ: Միգուցե անտառտնտեսության հետ համաձայնեցվե՞լ է:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) - Անտառտնտեսության հետ ենք համաձայնեցրել:

Խոսք (Մարատ Հարությունյան) - Համայնքի հետ՝ կոնկրետ մենք ներկայացնում ենք Կապան համայնքը, մեր հետ ե՞րբ է համաձայնեցվել:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) - Մեր աշխատողները համայնքներ գնացել են:

Խոսք (Մարատ Հարությունյան) – Ոչ նման բան չի եղել:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Ներողություն ներկայացեք:

Պատասխան (Սարգիս Խաչատրյան) – Սարգիս Խաչատրյան՝ Քաջարանի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ: Մեր համայնքում էլ տենց բան չի եղել: Ոչ մեկ ոչ եկել է, ոչ մի համաձայնություն չի եղել:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) - Մենք դա կպարզենք, որովհետև նրանք ասեցին, որ համայնքներ գնացել են, որտեղ որ ենթադրենք անհամապատասխանություն և շտկելու հարց է եղել, միանգամից ճշտել են:

Խոսք (Մարատ Հարությունյան) – Ոչ նման բան չի եղել, ավելին ասեմ հաշվետվությունը մեզ բավականին զարմացրել է, իսկ քարտեզային համադրումը՝ մեզ թեթևակի շոկի է ենթարկել: Քանի որ պարզվեց, որ մոտավորապես 14963 հա անտառտնտեսության տարածքն ավելացել է: Համադրումից հետո պարզվեց, որ բավականին մեծ ահռելի տարածքներ, չեմ կարող ասել 14963 հա-ից քանի հազարն է վերաբերվում Կապան համայնքին, բայց նախնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բավականին մեծ տարածքներ Կապան համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներից ընդգրկվել են Կապանի անտառտնտեսության տարածքի մեջ:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) – Ուրեմն մեր հանձնարարությունը, մեր պատվիրատուն հետևյալն է ասել, ինչքան անտառներ կան, ինչքան ծառապատ անտառային տարածք կա, դուք դրանք մեզ ներկայացրեք: Դա չի նշանակում, որ մենք համայնքներից ինչ-որ հող ենք վերցնում: Մենք ով ենք, որ կարողանանք հող վերցնենք: Հողի կատեգորիան փոխելու համար կառավարության որոշում է պետք: Իսկ մեր աշխատանքով, մենք ցույց ենք տվել ամբողջ անտառները, որոնք գոյություն ունեն այս տարածաշրջանում: Հետագայում՝ ենթադրենք կառավարության որոշում դուրս կգա, կընդունի, կլինի անտառի և համայնքների մեջ խոսակցություն՝ մեկին սա է ձեռնտու, մյուսին նա է ձեռնտու: Դա իրեն է վերապահել այո Հայանտառ ՊՈԱԿ-ը այդ աշխատանքները կազմակերպելու և անելու համար: Իսկ մենք ֆիքսել ենք ընդհանուր անտառային տարածքները, փաստացի անտառները, որոնք գոյություն ունեն ըստ կադաստրի:

Խոսք (Մարատ Հարությունյան) - Ես ենթադրում եմ, որ Դուք ֆիքսել եք, ոչ թե անտառածածկ տարածքներ, այլ ծառակալած, թփակալած տարածքներ:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) – Ոչ:

Խոսք (Մարատ Հարությունյան) - Դուք Ձեր կարծիքն ունեք, մենք էլ ներկայացնում ենք մեր համայնքը և գտնում ենք, որ Դուք ուղղակի չգիտեմ ինչ համակարգով եք աշխատել, եթե ֆիքսված կա:

Պատասխան (Մարինե Ոսկանյան) - Forest Book և ArcGIS համակարգերով:

Խոսք (Մարատ Հարությունյան) - Նման համակարգերով, ուղղակի այն տարածքներում՝ սեփական լինեն, թե մասնավոր սեփականություն լինեն, որտեղ մարդիկ մի քանի տարի հարգելի

կամ անհարգելի պատճառներով չեն մշակել իրենց հողը: Ծառը, թուփը դուրս է եկել Դուք դա համարել եք, որ դա արդեն անտառածածկ տարածք է:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) - Մենք չենք համարել, մենք ֆիքսել ենք, որովհետև փաստացի անտառ է:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Խնդրեմ պարոն Մանուկյան:

Խոսք (Սասուն Մանուկյան) - Ես ուզում եմ նշել, որ պարոն Հարությունյանը նշեց, որ Կապանի անտառտնտեսության տարածքը մեծացել է: Նախ 4430 հա ավելացել է, որովհետև Կապանի անտառտնտեսությանը հաջողվել է Արծվանիկի անտառտնտեսությունը վերադարձնել Կապանին: Երկրորդ՝ հիմք է ընդունվել Կադաստրի ընդունելուց հետո անտառային պետական հողերը անտառտնտեսության տարածքում ընդգրկելու քարտեզը: Կադաստրն է ներկայացրել, մենք չենք այդ քարտեզը նկարել, որի մեջ կարող է և՛ անտառածածկ տարածք կա, և՛ հող, և՛ արոտավայր, բայց կոչվում են անտառային, անտառային հողեր, անտառային գյուղատնտեսական, որոնք հանդիսանում են պետական սեփականություն: Այսինքն՝ այնտեղ ինչ-որ մեկը իր նախաձեռնությամբ տարածք չի ավելացրել:

Հարց (Մարատ Հարությունյան) - Պարոն Մանուկյան, Դուք համատեղված քարտեզը տեսե՞լ եք:

Պատասխան (Սասուն Մանուկյան) - Եթե նկատի ունեք 2008 թվականի քարտեզը, այո, տեսել եմ:

Խոսք (Մարատ Հարությունյան) – Ոչ, հիմա վերջին ներկայացրած համատեղված քարտեզը:

Պատասխան (Սասուն Մանուկյան) - Այս քարտե՞զը:

Պատասխան (Մարատ Հարությունյան) - Այո, այս քարտեզի մասին է խոսքը: Մենք այս քարտեզը համադրել ենք մեր համայնքային քարտեզի հետ, համայնքային սեփականություն հանդիսացող հողերի, մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի, որոնց մեջ մտնում են արտադրական հողեր, տարբեր սուբյեկտներին պատկանող հողեր և այդ համադրելուց հետո կատարված ուսումնասիրությունից հետո եմ ես այս ամեն ինչը ներկայացնում:

Պատասխան (Սասուն Մանուկյան) - Ես կարծում եմ դա այնքան հեշտ լուծվող է պարոն Հարությունյան: Մենք կարող ենք համայնքի և այս ներկայացված քարտեզները կցել, տալ կազմակերպությունը, նորից դիմի կադաստրին և խնդրի պարզաբանում տալ:

Խոսք (Գոռ Թադևոսյան) - Ներողություն եմ խնդրում, դա պետք է քարտեզագրման փուլում կատարվեր: Եվ հիմա ես վերադառնամ պարոն Հարությունյանի քիչ առաջ արված

հարցադրմանը: Երբ ներկայացրեց, որ Ձեր հաշվետվությունում նշել եք, որ այդ անհամապատասխանությունները ճշտվել և քարտեզները համաձայնեցվել է համայնքների, անտառտնտեսությունների հետ: Դուք պատասխանեցիք, որ քննարկումներ եղել են Ձեր մասնագետների կողմից: Այստեղ խոսքը քննարկումների մասին չէ: Այլ հստակ գրել եք, որ քարտեզները համաձայնեցվել են համայնքների և անտառտնտեսության հետ: Կապանի համայնքապետարանի հետ Ձեր ընկերությունը որևէ քարտեզ չի համաձայնեցրել և կարող եք ֆիքսել, որ հաշվետվությունում կա այս տեղեկատվությունը իրականությանը չի համապատասխանում պարոն Հարությունյան:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) – Մենք միշտ հրավիրել ենք ներկայացուցիչներ, նաև եկել են, ցուցադրել ենք, ասել ենք ինչ հարց ունեք, մենք միշտ հրավիրել ենք համայնքի ղեկավարներին: Ով եկել է, նայել, ենթադրենք ասել է, որ նորմալ է կամ այսպես, անպես:

Պատասխան (Մարատ Հարությունյան) – Նայեք դուք պաշտոնապես ներկայացնում եք, որ համաձայնեցրել եք: Ես ուղղակի կցանկանայի տեսնել մի ինչ-որ փաստաթուղթ, որտեղ նշված է, որ Կապան, կոնկրետ մեր համայնքի անունից խոսեմ, Կապան համայնքի ինչ-որ ներկայացուցիչ ես կլինեմ կամ հանդիպումներին ներկա գտնվող մասնագետներից մեկը ծանոթացել է և տվել է իր համաձայնությունը:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) – Մենք նկարահանած ունենք այդ ամբողջ պրոցեսի: Ես մի հատ կնայեմ Ձեզ տեղյակ կպահեմ:

Պատասխան (Մարատ Հարությունյան) – Իրադրություններից առաջ ընկնեմ և Ձեզ ասեմ, որ նման բան չի եղել:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Պարոն Հարությունյան կարծում եմ, օրինակ, ինչպես հաշվետվությունը մեզ ուղարկեցին, կամ կարծիքի ուղարկեցին գոնե այդ ձևաչափով կլիներ գրություն, կցված քարտեզները և կլիներ կարծիք համաձայնեցման մասին կամ համայնքի համաձայնությունը: Նման համաձայնություն չի եղել...

Պատասխան (Գառնիկ Հարությունյան) – Գիտեք ինչո՞ւմն է հարցը: Եթե մեր պատվիրատուն ասել է, որ դուք մեզ տալիս եք ամբողջ ծառապատ տարածքը, իսկ այդ համաձայնեցումները, այդ ամեն ինչը արվում է ենթադրենք «Հայանտառ» ՊՈԱԿ-ը համայնքի հետ: Այսինքն մենք իրավասու չէինք այդ հարցը վերցնել մեր վրա, այդ իրավասությունը իրենց վրա է:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Պարոն Հարությունյան, դուք հաշվետվությունում իրականությանը չհամապատասխանող տեղեկություն եք նշել և փորձագիտական կենտրոնի համար եմ ասում:

Մեջբերում (Արմինե Վարդանյան) – Մենք գրությունն էլ ենք ստացել այդ մասին:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Հարց ունե՞ք պարոն Մանուկյան:

Լրացում (Սասուն Մանուկյան) –Մենք էլ ճիշտն ասած շտկումների կարիք ունենք: Արդեն պայմանավորվածություն կա կազմակերպության հետ, որ այդ շտկումները կանենք: Այնպես չի որ այդ կազմած ծրագիրը ամբողջությամբ, որ այս պահին ներկայացվում է մեր ուզածն է: Ես ուզում եմ սա էլ հաշվի առնեք, որովհետև մենք էլ այնտեղ սահմանների փոփոխություն նկատի ունենք: Եվ առաջարկություններ ենք ունեցել, որոնք այս պահին ներկայացված չեն, ես ուզում եմ նկատի ունենանք, որ անպայման մենք աշխատելու ենք: Բայց էլի կրկնեմ սահմանի քարտեզի հետ կապված ելակետը կադաստրի տվյալներն են: Մենք չենք կարող կադաստրին... Այսինքն քարտեզով նկարել կամ տարածք ավելացնելու գործառույթ չի եղել: Եղել է դիմում կադաստրին, տրվել է քարտեզ, որի վրա աշխատել ենք: Այնտեղ անտառային պետական բոլոր հողերը ներառվել են Կապանի անտառտնտեսության տարածքի մեջ: Ինչ վերաբերում է կրկնություններին, ես դա եմ ասում, կարծում եմ տեղին կլինի, որ դուք երկու քարտեզներն էլ նորից ներկայացնեք կադաստրին, որ համընկնում կա և իրենք, որը պետք է բացառեն ճշգրտումով տան:

Մեջբերում (Արմինե Վարդանյան) - Ես մի լրացում էլ անեմ, եթե կարելի է: Միայն կադաստրը չէ, ինձ թվում է շրջակա միջավայրի նախարարության համապատասխան բաժինն էլ պետք է աշխատի, իրենք ավելի շատ պետք է շահագրգռված լինեն:

Պատասխան (Սասուն Մանուկյան) - Չի կարող այդպիսի բան լինի: Որևէ լիազոր մարմին չի կարող կադաստրի փոխարեն տվյալ տա կամ ասեն, որ սա փոխվի, նա դրվի:

Մեջբերում (Մարինե Ոսկանյան) – Ես չասեցի փոխարեն: Ասեցի մասնագետների հետ միասին, այսինքն այս դեպքում շրջակա միջավայրի նախարարությունն այս հարցերը պետք է լուծի: Իրենք պետք է նախաձեռնողը լինեն և ոչ թե մենք ու դուք այսօր այս հանրային լսման ժամանակ որոշենք:

Խոսք (Արմինե Վարդանյան) - Տեսեք ես հիմա միայն պատասխանատու եմ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության գործընթացով և ես Ձեզ տեղեկացնում եմ, որ մենք այլևս ժամկետներ չունենք: Մեր փորձաքննության ժամկետը լրանում է սեպտեմբերի 5-ին, ևս տաս աշխատանքային օր երկարաձգելու համար 14 թվականի օրենքին համապատասխան:

Քանի որ փորձաքննության մուտք եղել հաշվետվությունը մարտի 29-ին, ինչևէ, ես չեմ կարծում, որ դուք կհասցնեք այդքան կարճ ժամանակահատվածում ինչ-որ փոփոխություններ անել, բայց եթե անեք ոչ մի խնդիր չկա:

Պատասխան (Սասուն Մանուկյան) – Իսկ այդ ժամանակահատվածի երկարաձգումը ինչի՞ հետ է կապված:

Խոսք (Գոռ Թադևոսյան) - Օրենքով է սահմանված:

Խոսք (Արմինե Վարդանյան) - Տեսեք օրենքով է սահմանված է 30 աշխատանքային օր երկարաձգում և պլյուս 10, եթե ինչ-որ բաներ չեն հասցնի լրամշակումներ անել: Ես Ձեզ ասեմ լրամշակումը ուղարկելուց հետո բավականին ուշ է ներկայացվել հաշվետվությունը փորձաքննության: Փորձաքննության ներկայացվելուց հետո անմիջապես որոշ ուսումնասիրություններից հետո նշանակվել է հանրային քննարկումներ: Օգոստոսի 9-ին, ես սզբում նշեցի, որը չեղարկվելուց հետո նշանակվել է օգոստոսի 30-ին: Այսինքն մեր փորձաքննության ժամկետները շատ սուղ են և մենք իրավունք չունենք ժամկետները խախտելու:

Ձեկույց (Գոռ Թադևոսյան) – Այս քննարկումները և համաձայնությունները պետք է իրականացվեին հաշվետվության կազման ընթացքում և պետք է այդ ժամանակ համագործակցեին համայնքի հետ, որպեսզի չոտնահարվեին համայնքի շահերը, համայնքի բնակիչների և գործող տնտեսվարողների շահերն ու իրավունքները: Փաստ է, որ այսօր բավականին մեծ խնդիրներ կան հաշվետվության հետ կապված:

Խոսք (Էդուարդ Կարապետյան) – Անտառկառավարման պլանը դա առկա անտառների կայուն կառավարումն ապահովող փաստաթուղթն է: Անտառկառավարման պլանով հողի սեփականության տեսակ կամ նպատակային նշանակություն փոփոխել չենք կարող: Ուղղակի ուզում եմ ասել, որ անտառկառավարման պլանը չի կարող հիմք հանդիսանալ հողի սեփականության տեսակի կամ նպատակային նշանակության փոփոխման համար: Դրա համար կա ընթացակարգ, որոշմամբ սահմանված կարգով պետք է միջգերատեսչական հանձնաժող շրջանառություն լինի և եթե դա նախաձեռնվի, արդեն շահագրգիռ կողմերը իրենց կարծիքը կարող են ներկայացնել այդ գործընթացի վերաբերյալ:

Խոսք (Մարատ Հարությունյան)- Ի պատասխան Ձեր դիտարկման, որ հանձնարարված է եղել ֆիքսել անտառային տարածքները, ես ցանկանում եմ ընթերցել հաշվետվության մեջ ֆիքսված տեքստերը, որտեղ գրված է անտառտնտեսության կառուցվածքը և փոփոխությունը: Ավելին ասեմ 14963 հեկտարը ես օդից չեմ ասում, այդ 14963 հեկտարը բաժանված է մանրամասն ըստ քառակուսիների: Ներկայացված վերջնական քարտեզը ի դեմս անտառտնտեսության

կառուցվածքի, մենք համադրել ենք և պարզել, որ այդ տարածքների բավականին մեծ ծավալը համընկնում է մեր համայնքային հողերի հետ:

Լրացում (Գոռ Թադևոսյան) – Ներողություն եմ խնդրում, բայց այս հաշվետվությունը այս ձևով անընդունելի է: Իհարկե ապագայում թերությունների շտկման հետ կապված պետք է միջոցներ ձեռնարկվի, բայց մենք այսօր հավաքվել և իրականացնում ենք հանրային լսում ներկայացված հաշվետվության փորձաքննության վերաբերյալ և փորձաքննական կենտրոնը հանրային լսումից հետո սահմանված ժամկետում պետք է կարծիք տա: Իհրակե խնդիրներ կան և հենց այդ պատճառով ենք ասում, որ այս հաշվետվությունը այս ձևով անընդունելի է: Հիմա խոսքը փոխանցեմ Կապանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ՝ Կարեն Գրիգորյանին:

Խոսք (Կարեն Գրիգորյան)- Սկսենք նրանից, որ ելակետային տվյալները Ձեր փոխանցմամբ վերցրվել են կադաստրի կոմիտեից, բայց հաշվի չեն առնվել Կապան համայնքի գլխավոր հատակագծի փոփոխությունները, Սյունիքի միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերը, որում նաև ներառված են հողերի նպատակային նշանակության փոփոխություններ: Կապան համայնքի գլխավոր հատակագծի փոփոխություններում նույնպես ներառված են անտառային հողերի և գյուղատնտեսական հողերի նպատակային նշանակության փոփոխություններ:Այդ երկու հիմնական փաստաթղթերը հաշվի չեն առնվել ներկայացված նախագծում: Մեկ օրինակ ներկայացնեմ, որպեսզի պարզ լինի: Համլետավան, Շղարշիկ թաղամասերում տեսնում ենք կանաչով նշված են պետական անտառային նշանակության հողամասերը: Սա նույն կադաստրի ինֆորմացիան է: Հիմա ներկայացված քարտեզի համաձայն՝ կապույտ գծով ներկայացված է անտառային սահմանը, որը անտառային հողից առաջ է եկել տեսեք ինչքան մեծ մակերեսով, այսինքն՝ գյուղատնտեսական նշյալ հողերը նույնպես ընդգրկվել են անտառային հողերի մեջ: Անտառայինը մուգ կանաչով նշվածն է, եթե լույսը անջատենք, ավելի լավ կերևա: Բաց կանաչը համայնքային հողերն են: Կապան համայնքի գլխավոր հատակագծով նշյալ տարածքը Համլետավանի բնակելի կառուցապատման հող է, իսկ այս գունավորված տարածքների նպատակային նշանակությունը փոխվել է բնակավայրերի կառուցապատման հողերի: Արդեն ավագանու որոշում էլ կա կատեգորիայի նպատակային նշանակությունը փոխելու մասին և հողամասերի՝ ըստ հերթականության հատկացումներ են կատարվում: Հավելեմ, որ այս հատվածներում Քաջարանշին տրեստի այգեգործական նշանակության տարածքն է եղել, որտեղ հատկացումներ կան և քաղաքացիները փաստաթղթերով պարբերաբար գալիս և իրենց հողամասերի

գրանցումներ են կատարում: Գլխավոր հատակագծի փոփոխությունների և միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերի չուսումնասիրելու պարագայում այսպիսի խնդիրների առաջ ենք եկել: Նույն ձևով ջրախորգեսի հարևանությամբ գտնվող անտառային հողերը փոխվել են բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի, սակայն տեսնում ենք, որ կադաստրային քարտեզում այս հատվածները նույնպես ներառված են անտառային նշանակության հողերի մեջ:

Հարց (Սասուն Մանուկյան)- Կադաստրային քարտեզների հետ մենք ի՞նչ կապ ունենք:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- Եթե մեզնից կամ քաղաքաշինության կոմիտեից գլխավոր հատակագիծը վերցնեիք, կտեսնեիք, թե զարգացման նախագծերում ի՞նչ է ներառված:

Հարց (Էդուարդ Կարապետյան) – Փոփոխվող հողերի մեջ պետական անտառայինը փոփոխման ենթակա՞ է:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- Այո, ենթակա է: Միկրոռեգիանալը հաստատվել է 2021 թվականին, իսկ Կապան համայնքի գլխավոր հատակագծի փոփոխությունները՝ 2015 թվականին: Նույն Արծվանիկի պոչամբարի տարածքում անտառային նշանակության հողերից նպատակային նշանակությունը փոխվել է և արդեն իսկ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատին կառուցապատման իրավունքով տրամադրված տարածքներ կան, որոնք ներառված են անտառային հողերի մեջ: Կապույտով նշվածները արտադրական նշանակության հողերն են, որոնք ոնց տեսնում ենք ներառվել են անտառային նշանակության հողերի մեջ:

Խոսք (Սասուն Մանուկյան)- Պոչամբարի հարակից տարածքների հետ կապված ակնառու մեկ օրինակ բերեմ: Այս դիմացի տարածքում անտառտնկման աշխատանքներ են իրականացվում: Համայնքի ղեկավարի հետ մենք պայմանավորվեցինք, որ անտառային հողերի կատեգորիան փոխելու ժամանակ Քաջարանի կոմբինատը պարտավորվելու է կրկնակի տարածքով անտառապատման աշխատանքներ իրականացնել: Եթե մեր նախկին քարտեզը այստեղ երևար պոչամբարի կեսը անտառային հողեր են եղել:

Լրացում (Կարեն Գրիգորյան)- Հիմա պոչամբարի տարածքը ավելի մեծ է, ես 2017 թվականի քարտեզ եմ այժմ ցույց տալիս: Այս տարածքը համայնքային գյուղատնտեսական հող է եղել, կատեգորիան փոխվել է արդյունաբերական հողերի, բայց ըստ Ձեր ներկայացրած քարտեզների այս հողերը ևս ներառվել են անտառային հողերի մեջ: Այդ հողերը երբևէ անտառային հողեր չեն եղել:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան)- Ձեր ասածը նորից նայելու ենթակա է, դուք ասում եք չի եղել, մենք ասում ենք եղել է: Պետք է փաստացի նայենք, երկու թղթերը դնենք, տեսնենք, թե ով է ճիշտ:

Մեջբերում (Մարինե Ոսկանյան)- Մենք չենք հավաքվել, որ ասենք, թե ով է սխալ, ով ճիշտ: Նայենք քարտեզին, հասկանանք ինչ անենք, որ այս փաստաթուղթը ունենանք, քանի որ վերջիվերջո այս կառավարման պլանը հենց Ձեր համայնքին է ծառայելու: Այստեղ շահերի ոտնահարում չի եղել, բերեք այդպես չգնահատենք, եկեք համագործակցենք:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- Դուք ոտնահարել եք համայնքի շահերը, համագործակցում են ոչ թե այս օրը, այլ այս քարտեզները կազմելու ժամանակ: Մի անգամ խորհրդակցություն եղել է, ասեցիք ուղղելու եք, մշակելու եք, համագործակցելու եք համայնքի հետ, մենք էլ նշեցինք, որ խնդրահարույց տարածքներ ունենք, եկեք համատեղ քննարկենք, մեր հողային բալանսն էլ չխախտելով լուծում գտնենք: Բայց արդյունքում ստացվեց, որ այժմ բերել եք ներկայացրել քարտեզ, որում համայնքային հողերը՝ մի քանի հազար հեկտարներով նշված են որպես անտառային հողեր: Արդյունաբերական ոլորտի խնդիրները արդեն ներկայացրեցի, խնդիրներ կան նաև իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող հողերում: Օրինակ պրոֆիլակտորիայի տարածքը՝ 17,29 հա հանդիսանում է որպես «ԶՊՄԿ» ՓԲԸ սեփականություն, բայց դարձյալ դրա մեջ նշված են անտառային հողեր: Կադաստրով այս հողերը մասնավոր սեփականություն են հանդիսանում, ոչ թե անտառային: Սյունիքում վարելահողեր կան, որոնք էլի դաշտի շուրջը սխալմամբ նշված են անտառային: Բայց պարզ երևում է, որ այնտեղ անտառ բացարձակ չկա, իսկ այս ծրագրում սրանք չեն հանվել, ինչպես նախնական խոսել էինք: Սյունիքում, Դիցմայրիում իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող վարելահողերի մեջ մտել են անտառային սահմաններ: Անձը իր վարելահողը կարող է լավ չի մշակել, թփակալել է, ծառակալել է, սակայն դա չի նշանակում, որ անտառ է:

Խոսք (Սասուն Մանուկյան) – Այս անտառկառավարման պլանով չի կարող հողի կատեգորիան փոխվել: Եթե դուք ասում եք, որ կադաստրով այդ կարգավիճակն է, մեր պլանում, եթե անգամ մենք որոշենք հանել, մեկ է տնօրինելը, որ կադաստրով պետք է գնաս ձևակերպման, տալու է որպես անտառային: Որպեսզի երկար չքննարկենք, կարճ ճանապարհը սա է , 2 քարտեզները պետք է համադրենք, համադրումների համար կադաստրից պարզաբանումներ ուզենք, որ այդ շտկումները անենք:

Պատասխան (Գոռ Թադևոսյան)- Պարոն Մանուկյան, խնդիրները այնքան շատ են, որ դա հեշտ չի լուծվի, պետք է ժամանակին համագործացեիք համայնքի հետ: Համայնքի հետ չեք

համագործակցել, համայնքի շահը, համայնքի բնակիչների շահը հաշվի չի առնվել: Ընկերությունը պարտավորված էր հենց հաշվետվության կազման ընթացքում համայնքի հետ համագործացել, սակայն չի իրականացրել: Այդ հաշվետվությունում այնպիսի խնդիրներ կան, որոնք մեկ ժամում, մեկ օրում լուծելու չեն: Բացառվում է այն տարբերակը, որ առաջ շարժվենք, որովհետև խնդիրները շատ են:

Հարց (Կարեն Գրիգորյան)- Նույնիսկ եթե նպատակային նշանակությունը չենք փոխում, հողը նշվում է անտառ, ապա քաղաքացին կամ իրավաբանական անձը զրկվում է իր հողի տնօրինման իրավունքից: Ինքը ազատ չի կարող տնօրինել իր տարածքը: Եթե ինքը որոշի թփակալումից ազատել իր տարածքը, վարելահողը բերի նախկին տեսքի, ինքը կընկնի տուգանքի տակ: Կարող է այդ հարցին պատասխանել պարեկային ծառայության ներկայացուցիչը, թե այս դեպքում ի՞նչ պատասխանատվության է ենթարկվելու քաղաքացին կամ իրավաբանական անձը:

Պատասխան (Էդուարդ Կարապետյան) – Պարեկային ծառայության լիազորությունները բացառապես պետական անտառային հողերի և բնության հատուկ պահպանվող տարածքներում են: Եվ եթե պարզվում է, որ այդ հողամասը մասնավոր սեփականության իրավունքով է, այնտեղ որևէ պատասխանատվության հարց չի կարող քննարկվել:

Լրացում (Կարեն Գրիգորյան)- Մենք հողամասերի նպատակային նշանակության փոփոխման նպատակներ ենք ներկայացնում լիազոր մարմնի համաձայնությունը ստանալու համար, ստանում ենք պատասխաններ, որ նշված տարածքները անտառտնտեսության քարտեզներով անտառային հողեր են: Վաղը քաղաքացին, եթե որոշի իր վարելահողի նպատակային նշանակությունը փոխել ինչ որ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու համար, բացառվում է, որ դա կարողանա իրականացնի, քանի որ այս ծրագրով նշվում է որպես անտառային հող:

Մեջբերում (Մարատ Հարությունյան)- Այս փաստաթուղթը բավականին լուրջ հիմք է ստեղծում, որ կարճ ճամանակ հետո այս հողերը պաշտոնապես կդառնան անտառտնտեսության հողեր: Սա ոչ առաջին անգամ է, ոչ էլ վերջին: Մարդու սեփականություն հանդիսացող հողը դուք գրել եք անտառային:

Պատասխան (Գառնիկ Հարությունյան)- Դա ոչ մի բան էլ չի ստեղծում, հակառակը՝ կարող է դառնալ համայնքային: Պրակտիկան այնպիսին էր, որ անտառային հողերը բոլոր համայնքները սեփականացրել էին: Ես կարող եմ հանել այն տարածքները, որոնք կադաստրով անտառային նշանակության հողեր են և դուք սեփականացրել եք:

Խոսք (Էդուարդ Կարապետյան) – Հողային ֆոնդի առկայությունը հաստատող կառավարության որոշման համաձայն տարիներ շարունակ անտառային ֆոնդը 330 քանի հազար հեկտարն է և փոփոխություն է կատարվել բացառապես ճանապարհաշինության նպատակով: Անտառկառավարման պլանը չի կարող հիմք հանդիսանալ հողի սեփականության տեսակը կամ նպատակային նշանակությունը փոփոխելու համար: Դրա համար ընթացակարգ կա նախատեսված:

Լրացում (Կարեն Գրիգորյան)- Բայց հողի լիարժեք տնօրինման համար կարող են լուրջ խոչընդոտներ առաջանալ: Արդեն մենք ունենք փորձ, որ շրջակա միջավայրի նախարարությունը իր բացասական կարծիքը տալիս է համայնքային սեփականություն հանդիսացող տարածքի վերաբերյալ՝ նշելով, որ դա ծառածածկ տարածք է և անտառային հող է ներկայացված, սակայն ինքը հանդիսանում է համայնքային սեփականության հողամաս:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Մենք ինչո՞ւ ենք ռիսկի տակ դնում մասնավոր ընկերությունների կամ ֆիզիկական անձանց հողային սեփականության իրավունքը, որ մի հատ էլ քննարկենք: Ես չեմ կարծում, որ այս կառավարման պլանը, որ մշակվում է՝ ապագայում լինելու է ուղղակի փաստաթուղթ: Ապագայում շատ հարցեր հիմնվելու են այս պլանի վրա: Այսինքն հենց այս փուլում պետք է այդ քարտեզները ճշտված լինեին, ոչ թե ապագայում հույս ունենանք, որ քաղաքացիների սեփականության իրավունքի խնդիրները անհատական կվերանայվեն: Մենք դեմ ենք նման մոտեցմանը, խնդիրը պետք է շուտ լուծվի, որ ապագայում ոչ մի ռիսկեր չլինեն ոչ տնտեսվարողների, ոչ ֆիզիկական անձանց, ոչ համայնքի համար:

Խոսք (Կարեն Գրիգորյան)- Օրինակ Շինարարների փողոցում Գրանդհաուսի ներքևի տարածքները գլխավոր հատակագծի համաձայն հողամասային նպատակային նշանակությունը փոխվել է հասարակական կառուցապատման: Նմանատիպ այլ տարածքներ հիմա փոխվել են, որոնց մի մասի գրանցումները արդեն կատարվել են: Նախատեսվում է նաև դպրոցաշինության համար այս տարածքը ծառայեցնել: Գլխավոր հատակագծով սպիտակով նշված տարածքը անտառայինից հանվել է որպես հասարակական նշանակության կառուցապատման:

Լրացում (Սասուն Մանուկյան)- Մենք միաձայն կարող ենք որոշել և Կապանի անտառտնտեսության տարածքը հանձնել համայնքին, բայց մեկ է այդ որոշումը չի կատարվելու չէ, կադաստրը իր հիմքերով է անում:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- Նպատակային նշանակության փոփոխության ավագանու որոշում արդեն կա, բայց հիմա նպատակային նշանակության փոփոխությունը գրանցում ենք ըստ անհրաժեշտության:

Լրացում (Դավիթ Համբարձումյան)- Հողի նշանակությունը դեռևս փոխված չէ ու ասենք նույնիսկ, եթե այդ հողը այժմ տնօրինվում է անտառտնտեսության մասնաճյուղի կողմից և եթե հետագայում հողի նշանակությունը փոխվի, ապա ոչ մի խնդիր չկա, թե տվյալ պահին ով է տնօրինում, ով չի տնօրինում:

Պատասխան (Գոռ Թադևոսյան)- Բայց ինչո՞ւ, եթե համայնքի սեփականությունը տնօրինում է ավագանին և համայնքի ավագանին ունի որոշում ու եթե տվյալ ընկերությունը համագործակցեր և պարոն Գրիգորյանի տեղեկատվությունը ստանար, ապա այսպիսի անճշտություններ չէին լինի: Այստեղ է, որ պիտի հարգենք համայնքի շահը, համայնքի ավագանու որոշումները և դրանք հաշվի առնելով այդ հաշվետվությունները կազմվեր:

Հարց (Էդուարդ Կարապետյան)- Եթե միկրոռեգիոնալում անտառային պետականը դուք նախատեսել եք որպես փոփոխվող հող, ապա ինքը դադարում է պետական անտառային հող լինելուց և չի կարող ներառվել անտառտնտեսության պլանում: Այնտեղ որևէ միջոցառում նախատեսելու իրավունք չկա և ստացվում է, որ անտառտնտեսությունը իրավասություն չունի՞ այդ հողերի նկատմամբ:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- Իհարկե, ոչ:

Հարց (Էդուարդ Կարապետյան)- Դուք 10 տարի նախատեսել եք միկրոռեգիոնալը որպես փոփոխման ենթակա, բայց այսօր դեռևս փոփոխված չէ ու պետական անտառային հող է:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- Արդեն իսկ ավագանու կայացած որոշում կա նպատակային նշանակության փոփոխության: Երկու կտոր հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը գրանցվել է, ամբողջականը չենք կարող: Մանրամասնեմ , թե ինչո՞ւ: Օրինակ եթե մեծ կտոր հողամասը՝ 20 հեկտարը տանենք նպատակային նշանակության փոփոխության պետական գրանցման, վկայական հանենք, ապա ամեն անգամ պետք է տարվի գույքի բաժանում, չափագրություն, նոր հասցե: Դրա համար արվում է ըստ անհրաժեշտության՝ ներկայացնելով նաև ավագանու որոշումը:

Լրացում (Մարատ Հարությունյան)- Մեր գործընկերներին չի հետաքրքրում ավագանու որոշումները, մեր գործընկերներին հետաքրքրում է կադաստրային քարտեզներում դրանք համայնքային են, թե՞ անտառային:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- Այս պահին քարտեզներում կա ֆիքսված անտառային, բայց դրանց կատեգորիան ավագանու որոշմամբ արդեն փոխվել է: Օրինակ՝ Վահանավանք այգեգործական տարածքի երկու կտոր հողամասերը մենք չենք կարող տանել գրանցման: Մենք ավագանու որոշումը կայացրել ենք, քաղաքացին երբ որ գալիս, դիմում է մեզ,

չափագրությունը հաստատում ենք և ավագանու որոշման հետ միասին իրականացնում գրանցում: Մենք իրավունք էլ չունենք գրանցելու, որովհետև այլ անձի սեփականություն է:

Լրացում (Էդուարդ Կարապետյան)- Քանի դեռ պետական անտառային հող է, անտառտնտեսությունը այնտեղ իրավասություն ունի և ինքը իրավունք ունի այնտեղ նախատեսել միջոցառումներ: Երբ որ սեփականության նպատակային նշանակությունը կփոխվի, նոր կծագեն իրավունքներ:

Լրացում (Կարեն Գրիգորյան)- Արդեն իսկ ավագանու որոշում կա: Ես նշեցի, որ քարտեզում դրանք անտառային հողեր են, սակայն այգեգործական ընկերությանը տրամադրված հողամասերն են: Քարտեզի սխալի արդյունքում է դա նշված: Հիմա մենք դիմել ենք, նպատակային նշանակությունը փոխվել է և երբ քաղաքացին իր փաստաթուղթը բերում է, տարվում է գրանցման: Քաղաքացին իր սեփականության հիմքը ունի, բայց քանի որ Հայանտառի հսկողության տակ է, ինքը իրավունք չունի իր ծառը կտրելու:

Հարց (Գոռ Թադևոսյան)- Պարոն Գրիգորյան, որ փաստաթղթերում է երևում, որ այդ տարածքները ավագանու որոշումով կան:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- Կապան համայնքի գլխավոր հատակագծի և միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերով: Գլխավոր հատակագծի փոփոխությունը կատարվել է 2015 թվականի հոկտեմբերի 8-ին՝ ավագանու թիվ 68-Ա որոշմամբ, իսկ միկրոռեգիոնալը հաստատվել է 2021 թվականի մարտի 17-ին՝ թիվ 31 որոշմամբ:

Լրացում (Արմինե Վարդանյան)- Միկրոռեգիոնալի փորձաքննությունը ինչքան հիշում եմ 2019 թվականին է եղել:

Պատասխան (Կարեն Գրիգորյան)- 2019 թվականից սկսել ենք աշխատանքները, 2021 թվականի դրական եզրակացությունը ստացվել է, մի քանի օր հետո էլ՝ ավագանու որոշումը:

Խոսք (Գոռ Թադևոսյան)- Եթե ժամանակին ընկերությունը համագործակցեր, ապա կծանոթանային այս երկու փաստաթղթերի հետ և այսօր մենք այս խնդիրները չէինք ունենա: Հաշվետվության կազման ժամանակ համայնքի հետ չի համագործակցվել և իհարկե ապագայում պետք է շտկվի, բայց խնդիրները պետք է լուծվեն հիմա, որպեսզի համայնքի, բնակիչների և տնտեսվարողների համար ավելորդ ռիսկեր չառաջանան:

Հարց (Գոռ Թադևոսյան)- ՇՄԱԳ կառույցը տեղազննություն իրականացրե՞լ է ներկայացված հաշվետվության հիման վրա:

Պատասխան (Արմինե Վարդանյան)- Ոչ, չի իրականացվել: Հաշվետվությունը մարտի 25-ին է ներկայացվել փորձաքննության և դեռ գործում էր 2014 թվականի օրենքի դրույթները, ըստ որի մենք տեղազննության իրավունք չունեինք: Ճիշտ է 2023 թվականի օրենքում հստակ սահմանված է ՌԷԳ հաշվետվության համար տեղազննություն, բայց ահռելի տարածքների տեղազննումը մի քիչ անիրական է: Այդ ինֆորմացիոն տեղեկատվությունը մեզ տալիս են համայնքներն ու բնակավայրերը:

Հարց (Գոռ Թադևոսյան)- Այսինքն ֆիզիկապես հնարավոր չէր տեղազննություն և եթե համայնքները ներկայացնում են խնդիրներ հաշվետվության հետ կապված, այդ մասով եք կոնկրետ տեղազննություն անում, ճիշտ հասկացա՞:

Պատասխան (Արմինե Վարդանյան)- Այո՛, ՌԷԳ-ի դեպքում այո: ՌԷԳ-ը դա ռազմավարական մեծ փաստաթուղթ է, ՇՄԱԳ-ից բավականին տարբերվող: Դրա համար համայնքը ներգրավվեց, մենք հասկացանք համայնքի խնդիրները, սակայն մինչ այդ էլ գիտեինք, որ փաստաթղթում խնդիրներ կային: Այս հանրային քննարկումները նրա համար են, որպեսզի վեր հանվեն բոլոր խնդիրները՝ կապված փաստաթղթի հետ: Հիշեցնեմ, որ օրենքի 29-րդ հոդվածով սահմանված կարգով հանրային քննարկումների ծանուցումից հետո, որը եղել է օգոստոսի 15-ին, 25 աշխատանքային օրվա ընթացքում կարող են ներկայացվել առաջարկություններ և դիտողություններ: Մենք 10 օր երկարաձգելու հնարավորություն ունենք և կսպասենք այդ առաջարկություններին և դիտողություններին ու նոր փորձաքննական գործընթացը կավարտենք:

Ամփոփում (Գոռ Թադևոսյան)- Հաշվի առնելով հաշվետվությունը, հանրային քննարկման ժամանակ հնչեցված դիտողությունները, հարցերը, պարզաբանումները և ուսումնասիրելով նյութերը՝ ներկայացնեմ համայնքի կարծիքը.

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերության կողմից ներկայացված «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033 թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության ուսումնասիրությամբ և ներկայացված փաստերը փաստում են, որ Կապանի անտառտնտեսության տարածքը 38459 հեկտարից ավելացվել է 14963 հեկտարով, հասնելով 53422 հեկտարի քաղաքացիների, իրավաբանական անձանց, համայնքային հողերի հաշվին՝ ոտնահարելով ինչպես համայնքի, այնպես էլ համայնքի բնակիչների, տնտեսվարողների իրավունքները: Տրամադրված քարտեզագրական նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քարտեզագրական աշխատանքները կատարվել են էական խախտումներով և առանց

իրավական հիմքերի, որի արդյունքում խախտվել են քաղաքացիների, համայնքի և իրավաբանական անձանց սեփականության իրավունքները: Մասնավորապես՝ անտառների կազմում ներառվել են քաղաքացիների, իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող տնամերձ հողերը, գյուղատնտեսական նշանակության վարելահողերը, խոտհարքները: Անտառտնտեսության կազմի մեջ են ընդգրկվել նաև համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրային հողեր, գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, էներգետիկայի, կապի, տրանսպորտի և այլ ենթակառուցվածքների, ինչպես նաև համայնքային սեփականության հողեր, որոնք տրամադրվել են իրավաբանական և ֆիզիկական անձանց կառուցապատման, վարձակալության և սահմանափակ օգտագործման, սերվիտուտի իրավունքով: Հաշվետվության լրամշակված ամփոփ նախաբանի 5-րդ էջում ներկայացված են իրականությանը չհամապատասխանող կեղծ տեղեկություններ այն մասին, որ գույքագրման և անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի քարտեզագրական նյութերի համադրությունն ի հայտ է բերել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, դրանք ճշտվել և քարտեզները համաձայնեցվել են համայնքների ու անտառտնտեսության հետ: Մինչդեռ Կապան համայնքի հետ որևէ քարտեզ չի ճշտվել, առավել ևս համաձայնեցվել: Այսպիսով, ակնհայտորեն ոտնահարվել և խախտվել են ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված տեղական ինքնակառավարման սկզբունքները, տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքները, Կապան համայնքի իրավաբանական, ֆիզիկական անձանց սեփականության իրավունքները:

Մասնավորապես ՀՀ սահմանադրության 9-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը:

ՀՀ սահմանադրության 10-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

ՀՀ սահմանադրության 179-րդ հոդվածի համաձայն՝ Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

ՀՀ սահմանադրության 184-րդ հոդվածի համաձայն՝

- Համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք:
- Համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սեփականությունն է:
- Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Փորձաքննության ընթացքում խախտվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ, մասնավորապես 5-րդ հոդվածի 6-րդ կետը սահմանում է պետական փորձաքննական եզրակացության հիմնավորվածության, օրիանականության, օբյեկտիվության ապահովումը:

Ինչպես պարզ դարձավ քննարկումներից չի պահպանվել օրինականությունը, խախտվել են տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքի, բնակիչների, տնտեսվարողների իրավունքները: Հաշվետվությունը չի կազմվել օբյեկտիվության սկզբունքի հիման վրա:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության օրենքի 17-րդ հոդվածի՝ փորձաքննության ընթացքում լիազոր մարմինը գործունեության ենթակա տարածքում իրականացնում է տեղազննման աշխատանքներ և դիտարկումներ՝ տարածքի առկա վիճակի և ՇՄԱԳ կամ ՌԷԳ հաշվետվություններում ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով:

Ինչպես պարզ դարձավ տեղազննում չի եղել, իսկ համայնքին էլ հաշվետվությունը ներակայացվել է վերջին պահին, հաշվետվության կազման ընթացքում համագործակցություն չի եղել, ուստի այս խնդիրների մասին համայնքը տեղյակ չի եղել:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի՝ պետական փորձաքննական դրական կամ բացասական եզրակացությունները կազմելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները, կարծիքները և հանրային լսումների արդյունքները: Գործընթացի մասնակիցների կարծիքները չընդունելու դեպքում լիազոր մարմինը տալիս է հիմնավոր

պատճառաբանումներ: Պետական փորձաքննական եզրակացությունը հաստատում է լիազոր մարմնի ղեկավարը կամ նրա լիազորած անձը:

Մենք արդեն տվել ենք մեր բացասական կարծիքը հաշվետվության հետ կապված: Այժմ էլ հանրային լսումից հետո ներկայացնում ենք մեր որոշումը.

Հաշվի առնելով, վերը նշված հանգամանքները և իրավական նորմերը գտնում ենք, որ «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությամբ ակնհայտորեն ոտնահարվել և խախտվել են Սահմանադրությամբ և Օրենքով երաշխավորված տեղական ինքնակառավարման սկզբունքները, տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքները, օրինական, իրավաչափ շահերը և Կապան համայնքի բնակիչների իրավունքներն ու շահերը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականության իրավունքները:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փոորձաքննական» ՊՈԱԿ-ին առաջարկում և պահանջում ենք ներկայացված հաշվետվությանը տալ բացասական եզրակացություն:

Շնորհակալություն մասնակցության համար:

<u>Հանրային քննարկման պատասխանատու՝</u>
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ **Արմինե Վարդանյան**

<u>Հանրային քննարկման վարող՝</u>
Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Digitally signed by TADEVOSYAN GOR 4004870232 Date: 2024.09.09 17:43:16 AMT **Գոռ Թադևոսյան**

<u>Ձեռնարկող՝</u>
«ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ ՍՊԸ տնօրեն **Հարություն Հարությունյան**

Մասնակիցների ցանկ

2024թ-ի օգոստոսի 30-ին ժամը 15:00-ին ՀՀ Սյունիքի մարզի ք. Կապանի Մշակույթի Կենտրոնի շենքում կայացած «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Կապանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ կառավարման պլանի նախագծի և վերջինիս՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային ծանուցման և քննարկումների

N	Անուն, ազգանուն	Կազմակերպություն/պաշտոն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1.	[illegible]	ՀԷՑ Հարավային էներգաբլոկ	077382882	
2.	Գարիկ Գրիգորյան	Գյուղատնտեսության նախարարության անտառային կոմիտե	094 650444	
3.	Աբրահամ Ստեփանյան	Կապանի համայնքապետարան	077872780	
4.	Արսեն Հովհաննիսյան	«Հայանտառ» ՊՈԱԿ բոլորի անտառպահպան	077-30-29-01	
5.	Յուրիկ Խաչատրյան	«Հայանտառ» ՊՈԱԿ գլխավոր տեսուչ	098004359	
6.	Սասուն Ամանգելդի	ՀՀ ՇՄՊՀ «Հայանտառ» ՊՈԱԿ, Դոլ գյուղի անտառապահ	077-11-53-22	
7.	Հրաչյա Կարապետյան	Հկոգարիճայի գյուղապետ	091342010	
8.	Գայանե Հովսեփյան	«Հայանտառ» ՊՈԱԿ	091907566	
9.	Սարգիս Հարությունյան	Լուսակ համայնքապետ	098-22-00-14	
10.	Գոռ Բեգլարյան	Հայկի համայնքապետ	077-300121	
11.	Աբրահամ [illegible]	ԵՄԱԿԻՀ ՊՈԱԿ գլխ. տես.	093247295	
12.	Լուսինե [illegible]	Քաջարանի համայնքապետ	094202387	
13.	Արփիկ Թադևոսյան	Քաջարանի համայնքի քաղաքացի	098991755	
14.	Վասակ Սոֆիյան	Գորայքի համայնքապետարան գլխ. հաշվետար	077542260	
15.				
16.				
17.				
18.				
19.				
20.				